Հավելված N 1
ՀՀ կառավարության 2022 թվականի
մայիսի 13-ի N 659 - Ա որոշման

ՍՈՒՐԵՆ ԵՎ ՀԱՍՄԻԿ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆՆԵՐԻ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

YEREVAN GATES

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ներդրումային ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) միտված է Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինության ոլորտի զարգացման ապահովմանը, ինչպես նաև բնակչության մեջ բարեկեցիկ ապրելակերպի հաստատմանը և համահունչ է ՀՀ կառավարության կողմից որդեգրված տնտեսական զարգացման ռազմավարությանը:

ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրականացման նպատակով Երևանի քաղաքապետարանից 23.02.2021 թ. արդեն իսկ ստացվել են Զորագյուղ ազգագրական թաղամասի 1-ին փողոց 21/3, 21/4, 21/5 հասցեների համար № 01/18-07/1-Փ-151-111 նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք (այսուհետ ՃԱ)՝ 2000 քմ տարածքի համար, և այժմ անհրաժեշտություն է առաջացել ուղղակի վաճառքի եղանակով ձեռք բերելու համայնքապատկան հողակտորի (կադաստրային կոդ՝ 01-006-502-0194) մի մասը (326 քմ):

Հարկ է նշել, որ 326 քմ տարածքը գտնվում է ստացված ՃԱ-ի հարակից տարածքում, որը ներդրողներին տրամադրելու դեպքում կօգտագործվի բիզնես համալիրի ճարտարապետական ամբողջականությունն ապահովելու համար:

ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Ծրագրով նախատեսվում է Հայաստանի Հնարապետության ք. Երևան, Կենտրոն վարչական շրջանի Ձորագյուղ ազգագրական թաղամասի 1-ին փողոց 21/3, 21/4, 21/5 հասցեներում գտնվող տարածքում կառուցել միջազգային չափանիշներին համապատասխանող և ռելիեֆային անկումով հողատարածքի համար նախատեսված ճարտարապետական բացառիկ լուծումներով բազմաֆունկցիոնալ բիզնես համալիր:

Համալիրն իր մեջ ներառելու է ինչպես բնակելի և բիզնես տարածքներ, այնպես էլ հատուկ մշակութային միջոցառումների համար նախատեսված սրահ (արդեն իսկ պայմանավորվածություն է ձեռք բերվել Սերգեյ Փարաջանովի թանգարանի հետ՝ որոշակի նմուշների ցուցադրության մասով), երեք հարկից բաղկացած ավտոկայանատեղ և ճարտարապետական նորագույն լուծումներով այգի:

Ծրագիրը ներառելու է նաև հարակից տարածքների բարեկարգում և ընդհանուր առմամբ կարող է լավ սկիզբ հանդիսանալ Հրազդանի կիրճի ճարտարապետական միջավայրի ձևավորման և հետագա զարգացման համար:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

Ներդրումային ծրագրով նախատեսվում է Ձորագյուղ ազգագրական թաղամասի 1-ին փողոց 21/3, 21/4, 21/5 հասցեներում կառուցել պրեմիում դասի բազմաֆունկցիոնալ կենտրոն՝ մոտ 10000 քմ տարածքով:

Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում է կատարել մոտ 10 մլն ԱՄՆ-ի դոլարի ներդրում:

Բազմաֆունկցիոնալ կենտրոնի կառուցման արդյունքում կստեղծվի 150-200 նոր աշխատատեղ:

Ներդրումային ծրագիրը նախատեսվում է իրականացնել մոտ 2-3 տարում:

Բազմաֆունկցիոնալ կենտրոնն իր մեջ ներառելու է

1) Թանգարանային հատված, որի վերաբերյալ ունենք նախնական պայմանավոր-վածություն Փարաջանովի թանգարանի ղեկավարության հետ: Շենքի մուտքը, որն ունի ընդարձակ ատրիում, կհամալրվի Փարաջանովի թանգարանային նմուշներով.

2) Բնակելի հատված, որը կունենա բաց պատշգամբներով հրաշալի տեսարան դեպի Արարատ լեռը, Արարատ կոնյակի գործարան, ինչպես նաև Հաղթանակի կամուրջ.

3) Գրասենյակային հատված, որը կլինի դեպի ժայռերն ընկած շենքի հետնամասում՝ իր մեջ ներառելով «գաղտնի այգի» անվանումը կրող այգի՝ շենքի հետնամասում.

4) Սրճարան, որը կապահովի թանգարանի այցելուների պահանջները, գրասենյակներում աշխատող անձնակազմի պահանջները, ինչպես նաև բնակիչների պահանջները.

5) Կլինիկա, որն իր մեջ կներառի հետևյալ ճյուղերը՝ ռեպրոդուկտոլոգիա, սոնոգրաֆիա, ուլտրաձայնային հետազոտություն, ատամնաբուժարան.

6) Մանկապարտեզ, որը կլուծի թե՛ բնակիչների և թե՛ գրասենյակային աշխատակիցների երեխաների նախակրթական խնդիրները.

7) Մարզասրահ, յոգայի սրահ, որոնք կապահովեն բնակիչների, ինչպես նաև աշխատակիցների առողջությամբ զբաղվելու խնդիրները.

8) Բարեկարգված արտաքին միջավայր՝ կառուցվելու են այգիներ շենքի դիմացի և հետևի հատվածում՝ բնակիչների, գրասենյակի աշխատակիցների, ինչպես նաև այցելուների համար հաճելի միջավայր ապահովելու նպատակով.

9) 3 հարկ ստորգետնյա ավտոկայանատեղ, որը կլուծի շենքում բնակվողների, գրասենյակային աշխատակիցների և այցելուների ավտոմեքենաների կայանելու խնդիրները:



Ներդրումային ծրագրով ստեղծվելու է էկո համակարգ, որը կարող է ծառայել Երևան քաղաքին, քաղաքացուն, զբոսաշրջիկներին և ընդհանուր առմամբ կարող է լավ սկիզբ հանդիսանալ Հրազդանի կիրճի ճարտարապետական միջավայրի ձևավորման և հետագա զարգացման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ